Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

10.07.2013թ.Ք. Երևան

ժ. 15.00 ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝

Կոմիտեի Նախագահ՝ Ա.Ասատրյանը

Կոմիտեի անդամներ՝ Ա.Պետրոսյանը, Ս.Հարությունյանը, Ֆ.Բերիկյանը, Ջ.Բաղդասարյանը, Ա.Գրիգորյանը, Ս.Տերտերյանը,

Հրավիրված էին՝ Է.Գևորգյանը, Ա.Կեսոյանը, Կ.Պետրոսյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Բարսեղյանը, Հ.Ներսիսյանը

Բացելով ներքին աուդիտի կոմիտեի նիստը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը կոմիտեի անդամներին և հրավիրվածներին ներկայացրեց ներքին աուդիտի համակարգի առկայության և գործունեության ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ նշելով, որ սա օրենսդրորեն ձևավորված նոր մարմնի՝ ներքին աուդիտի կոմիտեի առաջին նիստն է և հույս հայտնեց, որ այն կնպաստի ներքին աուդիտի գործընթացների արդյունավետ իրականացմանը: Նախարարը առավել կարևորեց նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով հիմնավոր մոտեցումների ցուցաբերումը, մասնավորապես՝ կազմակերպություններում առկա

ռիսկերի բացահայտման, ֆինանսական կառավարման գնահատման, համակարգերի արդյունավետության և գործող չափորոշիչներին համապատասխանության գործում հսկողության սահմանման, ինչպես նաև դրանց արդիականացման կապակցությամբ աշխատանքներ ծավալելու ուղղությամբ:

Նախարարի առաջարկությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2013 թվականի հուլիսի 10-ի նիստի հետևյալ օրակարգը.

Օրակարգ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 10.07.2013թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեյի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 01 խմբի 02 դասի <01. Դպրոցն ավարտած, ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստման և <խոսող գրքերի> ձայնագրության ծառայություններ> ծրագրի ներքին աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

   (Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեյի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 01 խմբի 02 դասի <04 Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց <Արև-3> համակարգով ուսուցում> ծրագրի ներքին աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

3. "ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին, տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում" ծրագրի 2013թ հաշվետվությունների գնահատման կետ կապված խնդիրները:

(Զեկուցող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան)

Օրակարգի 1-ին հարցի առիթով ելույթ ունեցավ ՀՀ ԱՍՀ նախարար Ա. Ասատրյանը: Նախարարը անդրադարձավ "Դպրոցն ավարտած, ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստման և "խոսող գրքերի" ձայնագրության ծառայություններ" ծրագրի ներքին աուդիտի աուդիտարական ուսումնասիրությանը, որի արդյունքները ներկայացնելու համար խոսք տվեց ներքին աուդիտի բաժնի պետ Ս.Տերտերյանին:

Ս.Տերտերյանը ներկայացրեց 2013թ ընթացքում ներքին աուդիտի ենթարկված վերոհիշյալ ծրագրի աուդիտորական հաշվետվությունը և մանրամասն անդրադարձավ այդ ծրագրի աուդիտի ընթացքում ի հայտ եկած խնդիրներին՝ ներկայացնելով ներքին աուդիտի բաժնի եզրակացություններն ու առաջարկությունները: Այնուհետև ներքին աուդիտի բաժնի կողմից ներկայացված եզրակացության և առաջարկության վերաբերյալ արտահայտվեցին նախարարի տեղակալներ Ա. Պետրոսյանը, Ջ Բաղդասարյանը և Ս. Հարությունյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ.**

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանին՝ անդրադառնալ "Դպրոցն ավարտած, ուշ տարիքում

տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստման և "խոսող գրքերի" ձայնագրության ծառայություններ" ծրագրի բովանդակային խնդիրներին, մասնավորապես՝ իրականացնել " Բրայլյան տետր", "Բրայլյան գիրք", ամենամյա "Բյուլետեն", "Խոսող գրքեր" ծառայությունների կարիքների գնահատում և ներկայացնել հստակ առաջարկություններ:

Ժամկետ՝ 10 օր

2. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ "Դպրոցն ավարտած, ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստման և "խոսող գրքերի" ձայնագրության ծառայություններ" ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Ժամկետ՝ 3 օր

Օրակարգի 2-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ ՀՀ ԱՍՀ նախարար Ա. Ասատրյանը: Նախարարը անդրադարձավ "Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց "Արև-3" համակարգով ուսուցման և համակարգչային տեխնիկայի տրամադրման" ծրագրի ներքին աուդիտի աուդիտորական ուսումնասիրությանը, որի արդյունքները ներկայացնելու համար խոսք տվեց ներքին աուդիտի բաժնի պետ Ս.Տերտերյանին:

Ս.Տերտերյանը ներկայացրեց 2013թ ընթացքում ներքին աուդիտի ենթարկված վերոհիշյալ ծրագրի աուդիտորական հաշվետվությունը և մանրամասն անդրադարձավ այդ ծրագրի աուդիտի ընթացքում ի հայտ եկած խնդիրներին՝ ներկայացնելով ներքին աուդիտի բաժնի եզրակացություններն ու առաջարկությունները: Այնուհետև ներքին աուդիտի բաժնի կողմից ներկայացված եզրակացության և առաջարկության վերաբերյալ արտահայտվեցին նախարարի

տեղակալներ Ա. Պետրոսյանը, Ջ Բաղդասարյանը, Ֆ. Բերիկյանը և Ս. Հարությունյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ.**

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանին՝ բովանդակային առումով վերանայել "Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց "Արև-3" համակարգով ուսուցում" ծրագրի նպատակներն ու խնդիրները և հստակ առաջարկություններ ներկայացնել ծրագրի՝ 2013 թվականի նոր ձևաչափ մշակելու և 2014 թվականին նախատեսված ֆինանսական միջոցները "Զբաղվածության պետական ծառայություն" գործակալության կողմից հաշմանդամության ոլորտում նախատեսված ծրագրերի իրականացմանն ուղղորդելու կապակցությամբ:

Ժամկետ՝ 10 օր

4. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ "Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց "Արև-3" համակարգով ուսուցում" ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Ժամկետ՝ 3 օր

Օրակարգի 3-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ ՀՀ ԱՍՀՆ աշխատակզմի ղեկավար Ա. Գրիգորյանը: Իր ելույթում Ա.Գրիգորյանը ներկայացրեց "ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին, տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում" ծրագրի 2013թ հաշվետվությունների գնահատման կետ կապված խնդիրները:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ս.Հարությունյանին՝ "Առաքելություն Հայաստան" ԲՀԿ-ի կողմից 2013թ մայիս-հունիս ամիսներին ներկայացրած կատարողականների համադրման արդյունքում շահառու չհանդիսացող քաղաքացիների մասով ընտրանքային կարգով իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ և ներկայացնել եզրակացություն:

Ժամկետ՝ 3 օր

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ